

# ՆԱԻԱՍԱՐԳ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԱԿ

Բ. ՏԱՐԻ

ԹԻ 2(14)

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003

## ԽԱՂ

«... Էլ ո՞վ մեր հայոց լեզուով մոնչայ,  
Դարձէ՛ք, որ Արաքսն հայերէն հոսի,  
Տո՛ւն դարձէք, հայե՛ր, որ հողն էլ տուն գայ՝  
Մասիսն էլ նորէն հայերէն խօսի...»:

Շիրազի այս խօսքերը յիշեցնող տունդարձի մը բոլոր ունին համահայկական խաղերը: Եւ այս օրերուն, երբ ամէն նախաձեռնութեան եւ ձեռնարկի դիմաց «համահայկական» բառը կը զետեղուի, իրաւամբ համահայկական տարողութեամբ փոքրաթիւ նուաճումներէն մէկը կը հանդիսանան անոնք:

Եւ չխաբուինք «խաղեր» բառի պարզութեամբ: Որովհետեւ, ինչպէս յաճախ կը կրկնուի, սոսկական խաղեր չեն ասոնք, եւ խաղերուն մասնակիցները սոսկական մարզիկներ չեն: Անոնք կու գան Հայաստան ոչ միայն ֆուտպոլ, թենիս, պասքեթպոլ, լող, փինկ փոնկ, ճատրակ կամ պէտմինթըն «խաղալու», այլ կու գան հաղորդուելու իրենց հայրենիքով, եւ, այո՛, կու գայ քիչ մը աւելի մօտեցնելու համար այն օրը երբ «Արաքսը հայերէն պիտի հոսի» եւ Մասիսն ալ՝ «հայերէն խօսի»...:

Կը մնայ մաղթել, որ համահայկական խաղերը դառնան յարատեւող «ուխտագնացութիւններ», եւ տեսարար ներքաշեն տարբեր տարիքներու եւ մակարդակներու պատկանող մարզիկ - ուխտագնացներ:

## ՆԱԿԻՏԻՆ ԴՊՃԻՄԻՆՈՒ ՎՈՌՈՎՈՐՈՒ ԿՈՂՄԵԼՄԵ ԴԳ ԴԿՊԵՍՏՐՈՎՈՐՈՎՍԵ



Տեսնել՝ էջ 4



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ  
ՅՐԴ ԽԱՂԵՐ

Տեսնել՝ էջ 7-8



Տեսնել՝ էջ 2

ՊԷՅՐՈՒԹԻ ՄԵՉԱԶԳԱՅԻՆ  
ՄԱՐԱԹՈՂԸ՝ ՅԱՌՆՈՒՄԻ ԵՒ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՈՐՀՐԳԱՆԻՇ

ملحق أزياءك


# ՊԷՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՆԸ՝ ՅԱՌՆՈՒՄԻ ԵՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003: Առաւօտեան ժամը 8:30: Բազմաթիւ օտար եւ լիբանանցի արլերներ Նահատակաց հրապարակէն (քաղաքի կեդրոն) պիտի սկսին վազել դէպի արեւելք անցնելով Ժըմէլզիէն, Մար Մըխայէլէն, ապա՝ Քորնիշ Ըն-Նահր, Սիուֆի, Ատլիլէ, պիտի դառնան Հորշ Պէյրութի շուրջ ապա ուղղուին արեւմուտք՝ Մազրաա, Թալլէթ - ըլ - Խայաթ, Ռամլէթ ըլ Պայտա, Ռաուշէ- Ռաա Պէյրութ, Այնըլ Մրայսէ եւ վերջապէս՝ հասնի քաղաքի կեդրոն: Ապա անոնք միեւնոյն ուղիով պիտի կատարեն երկրորդ շրջան մը հասնելով աւարտի գիծը...:

Ահա այս է, ամփոփ գիծերու մէջ, Պէյրութի Միջազգային Մարաթոնը, որ սակայն, Մարաթոնի նախագահ Մայ ըլ Խալիլի եւ իր խումբին կատարած հսկայածաւալ աշխատանքներով, կատարուած մեծ ներդրումներով, զուգահեռաբար տեղի ունենալիք վազքի այլ մրցումներով, Մարաթոններու Միջազգային Միութեան հովանաւորութեամբ եւ Լիբանանի պատկան մարմիններու նեցուկով՝ «դատապարտուած է» դառնալու հսկայական յաջողութիւն մը եւ իր արժանի տեղը գրաւելու՝ միջազգային մարաթոններու ընտանիքին մէջ:

### ՎԱԶՔՈՒՂԻ

Մարաթոններու Միջազգային Միութեան (Էյ. Այ. Էմ. Էս.) պայմաններով, որել մարաթոնի վազքուղին պետք է ըլլայ ճիշդ 42,195 քիլոմէթր: Չափելու համար Պէյրութի Միջազգային Մարաթոնի վազքուղիի, Լիբանան ժամանեց Աթլէթիզմի ֆետերասիոններուն միջազ-



### ԻՆՉ Է ՄԱՐԱԹՈՆԸ

*Մարաթոնը վազքի ամէնէն երկար մրցումն է (42,195 քմ.): «Մարաթոն» բառը եկած է հին յունական համանուն շրջանէն: Կը պատմուի, թէ պարսիկներու դէմ պատերազմին մասին Աթէնքի իշխանութիւնը տեղեակ պահելու համար Ֆիտիփետես վազած է Մարաթոն շրջանէն մինչեւ Աթէնք (Ք. Ա. 490 թուական) եւ տեղ հասնելով ըսած՝ «ուրախացէ՛ք, յաղթեցինք» եւ... մահացած:*

*Տուեալներու համաձայն ամէն տարի շուրջ կէս միլիոն մարդիկ կը մասնակցին մարաթոններու, որ դարերէ ի վեր մեծ ժողովրդականութիւն վայելող մարզաձէ է:*

### ՄՐՅԱՆԻՇՆԵՐ

*Մարաթոնի այժմու մրցանիշը կը պատկանի Խալիտ Խաննուշիի (ծագումով մարոքցի), որ 42 քիլոմէթրը կտրած է երկու ժամ հինգ վայրկեան եւ 38 երկվայրկեանի մէջ:*

*Տղոց մարաթոնի մերօրեայ նշանաւոր անուններ են Փոլ Թերկաթ (Քենիա), Ռոնալտո Տա Քոսթա (Պրագիլ), Մովսէս Թանոյ (Քենիա), Հայլե Կեպրասելասէ (Եթովպիա) եւ այլն:*

*Աղջկանց մարաթոնի մրցանիշը կը պատկանի քենիացի Քաթրին Նտերեպայի (2:18:47):*



գային միութեան (Այ. Էյ. Էյ. Էֆ.) ներկայացուցիչ Նորի Ուիլիամսըն, եւ անոր կատարած քննութիւններուն հիմամբ Մարաթոնը ընդունուեցաւ Էյ. Այ. Էմ. Էս.ի կողմէ:

### ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ

Լիբանանցի արլերներու համար մասնակցութեան սակ ճշդուած է 10 տոլար, մինչ օտար մասնակիցներ պարտին վճարել 35 տոլար: Թէ-եւ արձանագրութեան պայմանաժամը աւարտած է 31 Օգոստոսին, սակայն կարելի է ուշ արձանագրութեան համար 15 եւրոյի տուգանք

# ԼՈՒՐԵՐ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

## ԼԻՔԱՆԱՆԵՒ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ ԶԱՌՔԱՎԵՐՆԵ ԿԵ ՇԱՔԻ ՄՈՏԱԼԼԱ ԹՊՊԱՐՈՒՄԻ ԲԱԺՄԿԵ

Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր՝ Բ. խմբակին առաջինը՝ Ա. խմբակին երկրորդը

Լիբանանի պասքեթպոլի աղջկանց հաւաքականը տպաւորիչ խաղարկութիւն ցուցաբերեց Յորդանանի մէջ տեղի ունեցող «Ապտալլա թագաւորի բաժակ» մրցաշարքին ընթացքին, եւ աւարտական հանգրիւանին 76 - 51 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սուրիոյ կազմը՝ տիրացաւ բաժակին:

**ԱԻԱՐՏԱԿԱՆ**  
Շաբաթ, 20 Սեպտեմբեր

Արժէ նշել, որ լիբանանեան կազմը աւարտականը կանխող հանգրիւաններուն նոյնպէս ջախջախիչ յաղթանակներ արձանագրեց յաջորդաբար Թունուզի (78 - 58), Եգիպտոսի (79 - 53) եւ Յորդանանի (75 - 34) վրայ:

## ՄՍԻՈՑ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՍԵՆՏԵՄԵՐՈՒԹԻՒՆ

\*  
\* \*

## «ՀՐԱՇԻ» ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ ՄԱՐԳԻՍ ԿԵ ՄՏՈՐԱԳՐԻ ԸՔՍԻ ՏՈՄԱՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ղասսան Սարգիս, որ Սաժէսը առաջնորդած է լիբանանեան, արաբական թէ ասիական տիտղոսներու, լքեց նշեալ ակումբին մօտ մարզիչի իր պաշտօնը եւ ստորագրեց Սաժէսի «ոխերիմ» մրցակից Ռիատի տոմարներուն վրայ:



«Այս նոր մարտահրաւեր մըն է, զոր կ'ուզեմ ստանձնել Լիբանանի եւ արաբական աշխարհի գրեթէ բոլոր մրցաշարքներուն Սաժէսի հետ տիրանալէ ետք», յայտնեց Սարգիս «Ալ Մուսաքպալ» օրաթերթին, Ռիատի մարզիչի պաշտօնը ստանձնելէ անմիջապէս ետք:

Յառաջիկայ 23 Սեպտեմբերէն 2 Հոկտեմբեր Հոնկ Բոնկի մէջ տեղի պիտի ունենայ Ասիական երկիրներու տղոց պասքեթպոլի ախոյեանութեան 22րդ մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 16 խումբեր, բաժնուած չորս խմբակի (իւրաքանչիւրը՝ չորս խումբ):

Կ'ըսուի, թէ Ռիատի ակումբի ատենապետ Նատրը Հարիրիի ջանքերով է, որ կարելի եղաւ Ղասսան Սարգիսը «որսալ»:

Ստորեւ՝ չորս խմբակներուն պատկերը՝ տեղի ունեցած վիճակաձգութենէն ետք.

Նշենք, որ Ղասսան Սարգիս նաեւ նշանակուած է Լիբանանի պասքեթպոլի հաւաքականի մարզիչ: Հաւաքականը շուտով պիտի ճամբորդէ Չեխիա, իբրեւ նախապատրաստութիւն Ասիոյ ախոյեանութեան:

\*  
\* \*

## ՖԵՏԵՐԱՍԻՈՒՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺՄԿԵ ՄՐՑԱՇԽԱՐՀԷ ԿԵ ՄԿՍԻ ՍԵՂՏԵՄԵՐԵՐ ԶԻՆ

Ֆետերասիոնի ֆուտպոլի բաժակին (նախապէս՝ «Վայսրոյ») մրցաշարքը պիտի սկսի յառաջիկայ Երեքշաբթի, 9 Սեպտեմբերին եւ պիտի աւարտի՝ Շաբաթ, 20 Սեպտեմբերին:

**Ա. ԽՄԲԱԿ**  
Լիբանան, Ուզպեքիստան, Հոնկ Բոնկ եւ Ղազախստան

Նկատի ունենալով, որ ֆետերասիոնը հովանաւորող ընկերութիւն մը չգտաւ, տիտղոսին տիրացողը եւ աւարտականի մրցումին պարտողը նիւթական նուէրներ պիտի ստանան: Առաջինը՝ տասը հազար ամերիկեան տոլար, իսկ երկրորդը վեց հազար:

**Բ. ԽՄԲԱԿ**  
Հարաւային Քորէա, Հնդկաստան, Քուէյթ եւ Մալեզիա

Մրցումներուն վայրը եւ ժամը թէեւ ցարդ չէ յստակացած, սակայն կը կարծուի, որ անոնք տեղի ունենան Սայտայի Քաղաքապետարանի դաշտին վրայ, երեկոյեան ժամը 8:30ին:

**Գ. ԽՄԲԱԿ**  
Սուրիա, Թայլէ, Իրան եւ Չինաստան

Ստորեւ՝ վիճակաձգութեան պատկերը.  
Ա. խմբակ.- Նըժմէ, Թատամոն Սուր եւ Անսար  
Բ. խմբակ.- Օլիմփիք, Սաֆա եւ Ահտ

**Դ. ԽՄԲԱԿ**  
Քաթար, Ծափոն, Ֆիլիպիններ եւ Յորդանան

Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը.  
Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր՝ Անսար - Նըժմէ  
Չորեքշաբթի, 10 Սեպտեմբեր՝ Ահտ - Սաֆա  
Հինգշաբթի, 11 Սեպտեմբեր՝ Թատամոն Սուր - Նըժմէ  
Ուրբաթ, 12 Սեպտեմբեր՝ Օլիմփիք - Ահտ  
Շաբաթ, 13 Սեպտեմբեր՝ Անսար - Թատամոն Սուր  
Կիրակի, 14 Սեպտեմբեր՝ Օլիմփիք - Սաֆա

**ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ**  
Երեքշաբթի, 16 Սեպտեմբեր՝ Ա. խմբակին առաջինը՝ Բ. խմբակին երկրորդը

# ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ. ՍԱՄՓՐԱՍԻ ԱՍՊԱՐԷԶԻՆ ՊԱՏԿԵՐԸ


«Պիտի կարօտնամ թենիս խաղալը: Պիտի կարօտնամ մրցակցութիւնը: Պիտի կարօտնամ 20 հազար հանդիսատեսներու ներկայութեան Ուիմպլըտընի եւ Եւ. Ըս. Օփընի ասարտականները, մղումն ու խանդավառութիւնը եւ թենիս խաղալու հաճոյքը: Այս բոլորին պակասը պիտի զգամ»:

Այս խօսքերով էր, որ Երկուշաբթի, 25 Օգոստոս 2003ին, թենիսի պատմութեան ամէնէն մեծ հսկան եւ ամէնէն փայլուն աստղը՝ ամերիկացի Փիթ Սամփրաս հեռացաւ թենիսի աշխարհէն. այն աշխարհէն, որ վերջին երեք տասնամեակներուն ընթացքին հիմնական փոփոխութիւններ կրեց նոյնիսկ Սամփրասի գեղեցիկ խաղարկութեան, պատմական մրցանիշներուն եւ իրագործումներուն շնորհիւ:

Այսպէս, 2003ի Եւ. Ըս. Օփըն կրան շլէմի մրցաշարքին առաջին օրը «Արթիւր Էշ» գլխաւոր դաշտին մէջ հազարաւոր թենիսի սիրահարներ ականատես եղան Սամփրասի հրաժեշտի հանդիսութեան, որուն ընթացքին խօսք առին Սամփրասի երբեմնի մրցակիցները՝ գերմանացի Պորիս Պէքըր, ամերիկացիներ՝ Ճիմ Բուրիք եւ Ճոն Մէքընրօ: Այդ օր, Սամփրաս վերջին անգամ ըլլալով մուտք գործեց իր ասպարէզին ամէնէն գեղեցիկ վայրկեանները «հիրընկալած» «Արթիւր Էշ» գլխաւոր դաշտը, սակայն այս անգամ, թենիսի *նաքէթ*ներուն փոխարէն, ան իր գիրկը ունէր իր 9 ամսու զաւակը՝ Քրիսչընը, որուն հետ Սամփրաս վերջին անգամ ըլլալով դաշտին շրջանը ըրաւ իր համակիրներուն եւ սիրահարներուն առջեւ:

Սամփրաս, որ նշանաւոր է իր կայծակնային *սըրվ*երով եւ *սըրվ-էնտ-վոյի* սքանչելի խաղաոճով, իր մեկնումով անկասկած մեծ տխրութիւն պատճառեց թենիսի սիրահարներուն: Ան միշտ ալ ճանչցուած էր իբրեւ ազնիւ մարզիկ եւ իր համակիրները տեսաբար ուրախ պահած էր իր շահած յաջորդական բաժակներով եւ հաստատած մրցանիշներով, բայց ան ամբողջ տարի մը լաւ արդիւնքներ չարձանագրելէ ետք, ի վերջոյ որոշեց վերջ մը դնել իր 15ամեայ փառաւոր եւ հարուստ ասպարէզին՝ յաւելեալ ժամանակ տրամադրելու համար իր ընտանիքին:

Ճիշդ է, որ Սամփրասը կարելի է համարել բոլոր ժամանակներու ամէնէն լաւ թենիսիստներէն մէկը, բայց պէտք չէ մոռնալ, որ անոր ասպարէզը, մեծ իրագործումներու կողքին, լի եղաւ նաեւ ցաւալի պահերով եւ դժուար փորձութիւններով: Այո՛, ան շատ մեծ թիւով յաղթանակներ տարաւ իր մարզիչին եւ մօտիկ բարեկամին՝ Թիմ Կալիքսընի օգնութեամբ, բայց արդեօք կարելի՞ է մոռնալ այն պահը, երբ Կալիք-



սընի ուղեղի քաղցկեղով մահանալէն ետք (3 Մայիս 1996) Սամփրաս իր արցունքներով յուզեց թենիսի համայն աշխարհը: Ճիշդ է նաեւ, որ Սամփրաս 2000ին շահած իր Ուիմպլըտընի կրան շլէմի բաժակով հասարեացաւ Ուիլիըմ Ռեյնշոյի հաստատած մրցանիշին (7 Ուիմպլըտընի տիտղոսներ), բայց արդեօք կարելի՞ է մոռնալ, որ ան այդ տիտղոսը շահեցաւ ամբողջ շաբաթ մը վիրաւոր վիճակով դաշտ ներկայանալէ ետք: Վստահաբար կարելի չէ մոռնալ նաեւ, որ այդ մրցաշարքի (Ուիմպլըտըն 2000) 2րդ հանգրուանի մրցումին Սամփրաս իր ծնողքին ներկայութեան դաշտին մէջ «փուլ եկաւ» եւ սակայն դարձեալ կանգնեցաւ եւ ցաւը մեղմացնող դեղերու շնորհիւ շարունակեց իր երթը եւ յաջորդող 5 մրցումները իր յաղթանակով կնքելով՝ տիրացաւ իր ասպարէզի ամէնէն յատկանշական տիտղոսին:

Եւ տակաւին շարքը երկար է... Անդրադառնալով Սամփրասի անցեալին՝ պէտք է անպայման նշել, որ անոր գլխաւոր նեցուկը իր յոյն հայրը եղած է: Սամփրաս մէկուկէս տարեկանին սկսած է ֆութպոլ խաղալ, իսկ աւելի ուշ անոր հայրը՝ Սոթերոս զայն յանձնած է դոկտ. Փիթ Ֆիշըրի խնամքին, որպէսզի այս վերջինը իր իսկ «ստեղծած» գիտական ձեւերով Սամփրասը դարձնէ լաւ թենիս խաղացող մը: Ֆիշըր իր ճկուն աշակերտին շարունակ ցոյց տուած է այլ առասպելի մը՝ Ռոտ Լէյվըրի ժապաւէտներէն եւ փորձած է Սամփրասը մարզելով զայն դարձնել Լէյվըրը գերազանցող «պատմութեան ամէնէն լաւ թենիսիստը»: Այս մէկով հանդերձ, Սամփրաս իր պատանութեան տարիներուն այդ-



քան ալ լաւ արդիւնքներ չէ արձանագրած, բայց ան իր յատկանշական խաղարկութեամբ միշտ ալ գրաւած է համակիրներուն ուշադրութիւնը:

Սամփրաս արհեստավարժ դառնալէ անմիջապէս ետք ալ շատ չէ փայլած եւ իր մասնակցած առաջին չորս կրան շլէմի մրցաշարքերուն ընթացքին 2րդ հանգրուանէն աւելի չէ յառաջացած: 1990ին էր, որ Սամփրասի աստղը սկսաւ փայլիլ, երբ ան յաջորդաբար Թոմաս Մուսթըրի, Իվան Լէնտրլի, Ճոն Մէքընրոյի եւ Անտրէ Ակասիի նման հսկաներ տապալելէ ետք, շահեցաւ Եւր. Էս. Օփընի կրան շլէմի բաց մրցաշարքը եւ 19 տարեկանին հանդիսացաւ ամէնէն երիտասարդ Եւր. Էս. Օփընի ախոյեանը: Այդ օրն էր, որ Սամփրաս - Ակասի զոյգը սկսաւ իր սուր մրցակցութեամբ գրաւել մարզախաղին սիրահարներուն ուշադրութիւնը:

Եւր. Էս. Օփընէն ետք Սամփրասի վրայ կեդրոնացան բոլոր լուսարձակները, բայց այդ մէկը շատ վատ ազդեցութիւն ունեցաւ «Սփորթց Իլլասթրէյթըս»-ի կողմէ «նոր ծնած աստղ» տիտղոսին արժանացած Փիթի վրայ, որ մեծ ճնշումի տակ ըլլալով՝ չկրցաւ իր բարձրութեան վրայ մնալ եւ շարք մը ամօթալի պարտութիւններ կրեց: Այս հանգրուանին Սամփրաս ծանօթացաւ Թիմ Կալիքսընի, որ հակառակ իր երիտասարդութեան տարիներուն համեստ թենիսմէն մը ըլլալուն՝ մեծ դեր խաղաց իբրեւ մարզիչ եւ յարատեւ աշխատանքով Սամփրասը առաջնորդեց դէպի գագաթ:

Այսպէս, 1993ին Սամփրաս յաջորդաբար տիրացաւ Ուիմպլտըրնի եւ Եւր. Էս. Օփընի տիտղոսներուն (առաջին մարզիկը, որ Պորիս Պէքըրէն ետք - 1989 - կ'իրագործէ այս մէկը) եւ տարուան ընթացքին 35 շաբաթ էջ. Թի. Փի.ի հրատարակած դասաւորման առաջին դիրքը գրաւելով՝ տարին աւարտեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքին վրայ: Սամփրաս շարունակեց իր երթը եւ 1994ին տասը մրցաշարքերու տիրանալով (առաջին մարզիկը, որ Իվան Լէնտրլէն ետք - 1989 - կը տիրանայ 10 տիտղոսներու) ամբողջ տարուան ընթացքին պահեց պարագլուխի դիրքը եւ 2412 կէտի հսկայ տարբերութիւն մը ստեղծեց 2րդ դիրքը գրաւող Մայքըլ Սթիչի վրայ (մրցանիշ մը): 1996ին Կալիքսընի մահը բաւական մեծ ազդեցութիւն ունեցաւ Սամփրասի վրայ, որ չկրցաւ յաջորդաբար 4րդ տարին ըլլալով տիրանալ Ուիմպլտըրնի բաժակին: 1997ին Սամփրաս տիրացաւ իր 4րդ էջ. Թի. Փի. Թուրի աշխարհի ախոյեանի տիտղոսին եւ 2րդ անգամն ըլլալով ամբողջ տարի մը չզիջեցաւ առաջին դիրքը (առաջին անգամ 1994ին), իսկ 1998ին ան իր ասպարէզին յաջորդական 6րդ տարին աւարտեց պարագլուխի դիրքին վրայ եւ այսպիսով կտրեց Ճեմի Բանըրզի մրցանիշը: Այս վերջինը յաջողած էր իր ասպարէզին ընթացքին յաջորդական հինգ տարիներ աւարտել էջ. Թի. Փի.ի դասաւորման պարագլուխի դիրքին վրայ (1974 - 1978):

Սամփրաս 1999ին Ուիմպլտըրնի իր 6րդ տիտղոսին տիրացաւ եւ աւելի ուշ, տարեվերջի ախոյեանութեան տիտղոսը գրպանելով հաւասարեցաւ Իվան Լէնտրլի մրցանիշին, որպէս հինգ տարեվերջի ախոյեանութիւններու տիրացած թենիսմէն: 2000 թուականը եղաւ Սամփրասի ամէնէն խանդավառ տարիներէն մէկը: Ան իր 7րդ Ուիմպլտըրնի բաժակը շահեցաւ եւ այսպիսով յաջորդաբար 8րդ տարին ըլլալով առնուազն կրան շլէմի մը տիրացած եղաւ եւ 13 կրան շլէմի տիտղոսներով հաւասարեցաւ Ռոյ Էմէրանի նախապէս հաստատած մրցանիշին: Նոյն տարին Սամփրաս ամուսնացաւ դերասանուհի Պրիմիթ Ուիլսընի հետ եւ քանի մը ամիս հեռու մնաց թենիսի դաշտերէն:


2001ին Սամփրաս չկրցաւ տիրանալ որեւէ տիտղոսի եւ իր համակիրները յուսախաբ ըրաւ երբ Ուիմպլտը-



տընի քառորդ աւարտականին տեղի տուաւ Ֆետըրըրի դիմաց: Յաղթանակներու բացակայութիւնը շարունակուեցաւ բաւական երկար ժամանակ, սակայն Սամփրաս 2002ին երեք մարզիչներ փոխելով վերջապէս իր նախկին մարզիչին՝ Փոլ Աննաքոնի հետ տիրացաւ իր ասպարէզի 5րդ Եւր. Էս. Օփընի եւ 14րդ կրան շլէմի տիտղոսին (մրցանիշ մը), երբ աւարտական հանգրուանին պարտութեան մատնեց իր մնալուն մրցակիցը՝ Ակասին: Սամփրաս այսպիսով չորրորդ անգամ ըլլալով Ակասին պարտութեան մատնեց կրան շլէմի մը աւարտականին եւ անոր հետ իր մրցումներուն արդիւնքը բարձրացուց 20 -14ի: Սամփրաս 31 տարեկանին տիրանալով բաժակին, այս անգամ ալ հանդիսացաւ տարիքով ամէնէն մեծ մարզիկը, որ Քէն Ռոզուելլէն ետք (1970 - 35 տարեկան) կը տիրանայ սոյն մրցաշարքին եւ ամէնէն տարիքաւորը, որ Արթիւր Էշէն ետք (1975 - Ուիմպլտըրն - 31 տարեկան, 11 ամիս) կը տիրանայ կրան շլէմի մը: Բացի այս բոլորէն, Սամփրաս յաջողեցաւ կրան շլէմներու տիրանալ իր պատանութեան տարիներուն, 20ականներուն եւ 30ականներուն, իրագործում մը, որ միայն Քէն Ռոզուելլ յաջողած էր նախապէս կատարել:

Այս բոլորին լոյսին տակ, էջ. Թի. Փի.ի հաղորդակցութեան յանձնախումբին փոխ նախագահ եւ էջ. Թի. Փի.ի «Տիուս» պարբերաթերթին գլխաւոր խմբագիրը՝ Տէյվիտ Հիկտըն իր գրած մէկ յօդուածին մէջ Սամփրասը նկատած է մարզախաղին յատուկ դէմքերէն մէկը եւ զայն աւելի վեր դասած Մայքըլ Ճորտընի, Թայկըր Ուուտի եւ Մարք Մէքկուայրի նման աստղերէ, փաստարկելով, թէ պասքէթպոլի մէջ մարզիկը կրնայ յենիլ իր խմբակիցներուն վրայ պոքսիակի մէջ՝ իր հանգիստի անկիւնին, իսկ կոլֆի մէջ իր օգնականին եւ «ազատ պահերուն», մինչ թենիսը հարիւր առ հարիւր անհատական խաղ մըն է եւ թենիսմէնը կրնայ վստահիլ միայն ու միայն իր ջանքերուն եւ կամքի ուժին: Աւելի'ն, Հիկտըն Սամփրասի նկարագիրն ու անոր 15ամեայ ասպարէզը պատկերացնող լաւագոյն խօսքը նկատած է Ուիմպլտըրնի գլխաւոր դաշտին մուտքին տեղադրուած բանաստեղծ Ռուտիըրտ Քիփլինկի հռչակաւոր «Եթէ» բանաստեղծութեան մէկ մասը, որ կ'ըսէ՝ «Եթէ կրնաս յաղթանակէն ետք հանդիպիլ պարտութեան եւ

ՆԱՐԻՆԷ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ



# ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

## ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՇՏՕՆԱՊԷՍ ԿԸ ԲՈՂՈՔԷ ԹՈՒՐՔՄԵՆԻՍՏԱՆԻ ԴԷՍ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերասիոնը պաշտոնական յայտարարությամբ մը տեղեկացուց, որ հատուցում կը պահանջէ Թուրքմենիստանի ֆուտբոլի ֆեդերասիոնէն, որ առանց պատճառի յետաձգած էր Օգոստոս 20ին Երեւանի մէջ տեղի ունենալիք Հայաստան - Թուրքմենիստան ֆուտբոլի բարեկամական մրցումը, որուն ծախսերը պիտի հոգար հայկական կողմը:

Այդ մրցումին ջնջումը պատճառ դարձաւ, որ Հայաստան չկարենայ ամբողջացնել յառաջիկայ Սեպտեմբերին Եւրօ - 2004ի գտումի մրցաշարքին համար իր վերջին պատրաստութիւնները:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերասիոնը ՖԻՖԱի եւ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ի նման իր յղած բողոքագիրին մէջ նշեց, որ եթէ նախապէս Թուրքմենիստանէն ժխտական պատասխան ստանար, մտադիր էր դիմել Փորթուգալին, Յորդանանին եւ կամ այլ երկրի մը:

### ԲԱՆԱՆՅ ԵՒ ՇԻՐԱԿ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքին Ա. հանգրուանին դարձի մրցումներուն, Հայաստանի երկու ներկայացուցիչները՝ Բանանց Երեւան եւ Շիրակ Գիւմրի իրենց դաշտերուն վրայ պարտութիւն կրելէ ետք իրենց մրցակիցներէն դուրս մնացին մրցաշարքէն:

Շիրակ 2 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց դանիական Ֆարուս Նիուսէլանտէն (երթ՝ 4 - 0, ի նպաստ Ֆարուսի), մինչ Բանանց պարտուեցաւ Հափոնէլ Թէլ Աւիւէն (Իսրայէլ)՝ 2 - 1: Երթին, Հափոնէլ 1 - 1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած է Բանանցի հետ: Բանանցի կողմ նշանակեց Ամիրեան (75րդ):

### ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԻՄՆԻՍՏԱՆԻ ԻՐԼԱՆՏԱՅԻ ԴԷՍ ԵՒՐՕ - 2004Ի ՉՏՈՒՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ

Եւրօ - 2004ի գտումի մրցաշարքին ծիրէն ներս Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը Սեպտեմբեր 6ին Երեւանի մէջ պիտի հիւրըն-

կալէ Յունաստանը (Զ. խմբակ), որմէ չորս օր ետք՝ Սեպտեմբեր 10ին, ՊելՖասթի մէջ հիւրը պիտի ըլլայ Հիւսիսային Իրլանտայի:

Վերոնշեալ երկու մրցումներուն համար, Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբին ուսմանացի մարզիչը՝ Միհայ Սթոյքօ, նկատի առաւ հետեւեալ մարզիկները.

**ԲԵՐԴԱՊԱՀՆԵՐ.** - Ռոման Պերեզովսքի (Տիմաօ Մոսկուա), Արմէն Համբարձումեան (Սլաւիա Սոֆիա) եւ Էտել Ապուլա Պեթէ (Փիւնիկ Երեւան):

**ՅԵՏՍԱՊԱՀՆԵՐ.** - Յարութիւն Վարդանեան (Սերվէթ), Սարգիս Յովսէփեան (Թորփետո Մեթալուրկ), Խոսէ Անտրէ Պիլիպիօ եւ Թուտոր Մարիան Զեքի (Փիւնիկ), Անաթոլի Մորոզով (Թոնի Ռոսթով) եւ Կարէն Տոխոյեան (Քրիլիա Սովիեթով):

**ՄԻՋՆԱՊԱՀՆԵՐ.** - Արթուր Պետրոսեան (Յիրիխ), Աղուան Մկրտչեան, Էտուարտ Փարցիկեան եւ Քարլ Լոմպէ (Փիւնիկ), Արթիւր Ոսկանեան (Էթնիքոս, Կիպրոս), Կարէն Ալեքսանեան (Շիրակ Գիւմրի) եւ Եղիշէ Մելիքեան (Մեթալուրկ Տոնէթցք):

**ՅԱՌԱՋԱՊԱՀՆԵՐ.** - Արման Քարամեան եւ Արտաւազդ Քարամեան (Արսենալ Քիել), Արա Յակոբեան (Բանանց Երեւան) եւ Գալուստ Պետրոսեան (Փիւնիկ):

### ՀԱՅՐԵՆԻ ԱՆՈՒՆԻ ԾԱՆՐԱԲԱՐՉԸ ՍՏԱՅԱԻ ՈՒՔՐԱՆԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Ուքրանիոյ նախագահ Լէոնիտ Քուչմայի հրամանագիրով, հայազգի ծանրաբարձ Արի Վարդանեան ստացաւ ուքրանական քաղաքացիութիւն:

29 տարեկան Վարդանեան, որ աշխարհի 12 մրցանիշներ հաստատած է, այսպիսով իրաւունք պիտի ունենայ յառաջիկայ տարի Աթէնքի մէջ (Յունաստան) տեղի ունենալիք Ողիմպիականի մրցումներուն Ուքրանիոյ հաւաքականին հետ մասնակցիլ ծանրաբարձութեան մրցումներուն:

# ՅՈՒՍԱՆԱԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ...

Շարունակուած՝ Տրդ Էջէն

նոյն ձեւով ընդունիլ զոյգն այդ խաբող»: Վերջապէս, Հիկտըն եզրակացնելով Սամփրասը նկատած է 21րդ դարու ամենահռչակաւոր թենիսիստը, այդ մէկը վերագրելով՝ կայսրութեան հասնելու իր անողոք եւ հաստատ կամքին:

Վերադառնալով հրաժեշտի հանդիսութեան, Սամփրաս խանդավառ ընդունելութեան արժանացաւ եւ իր ասպարէզին մասին պատրաստուած կարճ ժապաւէնի մը ցուցադրութենէն ետք, չկրցաւ զսպել իր արցունքները: Ան յայտարարեց, որ չի հրաժարիր, որովհետեւ ամուսնացած է եւ զաւակ մը ունեցած, այլ պարզապէս որովհետեւ կը կարծէ, որ իր երազածը իրագործած է եւ զագաթին հասած եւ հետեւաբար պէտք չի զգար շարունակելու: Աւելի ուշ, Մէքքընրօ խոստովանեցաւ, որ Սամփրաս լաւագոյնն է եւ թէ ինք շատ փորձած է անոր նմանիլ, բայց միշտ ալ ձախողած է: Միւս կողմէ, Քուրիթ, որ ներկայիս հեռատեսիլի վերլուծող մըն է, գովասանքով արտայայտուեցաւ իր նախկին զոյգի մրցումներու խաղընկերոջ մասին եւ անկրկնելի իրագործում մը նկատեց անոր պարագլուխի դիրքին վրայ շարունակ 6 տարի մնալը, մինչ Պէքքըր աւելցուց, ըսելով, թէ Սամփրաս պարզապէս լաւագոյնն էր եւ արժա-


նի էր իր իսկ դիրքը «գրաւելով» նկատուելու Ուիմպլըտընի մրցաշարքին ամէնէն փայլուն աստղը:

Յիշեցնենք, թէ Սամփրաս իր 15ամեայ ասպարէզին ընթացքին շահեցաւ 64 անհատական բաժակներ, որոնցմէ 14ը՝ կրան շլէմի տիտղոսներ (7 անգամ Ուիմպլըտըն, 5 անգամ ԵՍ. Օփըն, երկու անգամ Աւստրալիոյ բաց մրցաշարքը եւ ոչ մէկ անգամ Ռոլան Կարոսը) եւ 11ը՝ Մասթըրզի բաժակներէն եւ այսպիսով հաւաքած եղաւ մօտաւորապէս 43,5 միլիոն տոլարի կոկիկ գումար մը:

Պէտք է ըսել, որ Սամփրաս սքանչելի ասպարէզ մը ունեցաւ եւ թենիսի աշխարհը չէր կրնար լուռ կերպով հրաժեշտ տալ իրեն: Ան պէտք եղած ձեւով պատուուեցաւ եւ հրաժեշտի հանդիսութեան օրը իր ստացած յուշատախտակին վրայի գրութեան հարիւր առ հարիւր արժանի ըլլալը փաստեց:

Գրութիւնը կ'ըսէր.

«Երեք տասնեակ տարի երկարած ասպարէզի մը ընթացքին Փիթ Սամփրաս վերամշակեց թենիսի տղոց մրցանիշներու պատմութեան գիրքը եւ բոլորովին նոր իմաստ մը տուաւ «ախոյեան» բառին»:



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՅՐԴ ԽԱՂԵՐ

# ԵՐԵՒԱՆ ԳՐԱԲԵՑ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՍԱԲՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԸ

Կիրակի, 24 Օգոստոսին «Կարէն Դեմիրճեան»ի անուան մարզամշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Համահայկական Յրդ խաղերու պաշտօնական փակումը:

Պաշտօնական փակման արարողութեան ներկայ էր Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, որ իր խօսքին մէջ պաշտօնապէս յայտարարեց անոր փակումը, որմէ ետք հինգ մարզիկներ վար առին այդ խաղերու խորհրդանիշ դրօշակը:

Ակնարկելով Համահայկական խաղերուն, նախագահ Քոչարեան ըսաւ. «Այդ մէկը իրողութիւն դարձած համագային լաւագոյն ծրագիրներէն մէկն է: Համահայկական խաղերու կայացումը առիթ տուաւ ոչ միայն Հայաստան - Սփիւռք կապերու սերտացման, այլեւ՝ սփիւռքահայերու միջեւ եւս սերտ կապերու հաստատման: Համահայկական խաղերը ոչ միայն զուտ մարզական միջոցառումներ եղան, այլ հայութեան միասնական ուժի խորհրդանիշը, որուն ընթացքին Հայաստան եւ Սփիւռք

միասնաբար ապրեցան եւ նոր յոյսերով եւ եռանդով լեցուեցան»:

Նախագահ Քոչարեանէն ետք խօսքեր արտասանեցին այլ պաշտօնական անձնաւորութիւններ եւս:

Ապա տեղի ունեցաւ խաղերու փակման համերգային բաժինը, որուն ընթացքին ելոյթ ունեցան հայրենի երգի եւ պարի խումբեր եւ արուեստագէտներ: Ի վերջոյ, մարզամշակութային կեդրոնին շրջակայքին մէջ տեղի ունեցաւ խաղերու ջահին մարման արարողութիւնը:

Բաղդատմամբ նախորդ երկու Համահայկական խաղերուն, այս տարուան խաղերուն մասնակցող մարզիկներու թիւը աւելի մեծ էր, մանաւանդ՝ պասքեթպոլի, ֆութպոլի, վոլիպոլի մարզիկներուն ապագան: 31 երկիրներէ 81 քաղաքներու շուրջ երեք հազար մարզիկներ ներկայ եղան այս խաղերուն: Մարզիկներուն 1326ը ժամանած էին Սփիւռքէն: Անոնց կողքին էին նաեւ շուրջ 3500 զբօսաշրջիկներ: Մասնակցող շրջաններու շարքին էին Հայաստանի 14 եւ Արցախի 3 քաղաքներ:

Լաւագոյն պատուիրակութեան մեծ մրցանակին տիրացաւ Թեհրանի խումբը, որ իր Շար.ը՝ էջ 8



## ՊԷՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՆԸ...

Շարունակուած՝ Տրդ էջէն

մը վճարելով արձանագրուիլ մինչեւ Սեպտեմբեր 15 (արձանագրութիւնները պէտք է կատարուին համացանցի կամ Ե-նամակի միջոցով, կամ անձամբ):

### ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

Մարաթոնի բոլոր մասնակիցները պիտի ստանան մրցա-



շարքի պաշտօնական թի-շրթթ, մրցաշարքի գրքոյկը եւ պիտի մասնակցին մրցաշարքէն ետք տեղի ունենալիք խրախճանքին:

Բոլոր այն մասնակիցները, որոնք մրցաշարքը կ'աւարտեն 8 ժամէն առաջ պիտի ստանան յուշամետալներ եւ վկայագիրներ:

150,000 տոլարի նիւթական մրցանակ պիտի բաժնուի առաջնակարգ դիրքերը գրաւողներուն: Տղոց եւ աղջկանց նիւթական մրցանակները համահաւասար են: Առաջին դիրքը գրաւողը պիտի ստանայ 12,000 տոլար, 2րդը՝ 9,000, իսկ երրորդը 6,000 տոլար: Առաջին 12

դիրքերը գրաւողները (որոնց բոլորը շատ հաւանաբար ըլլան օտար արհեստավարժներ) պիտի ստանան մրցանակներ: Լիբանանցիներուն մէջ առաջին 7 դիրքերը գրաւողները նոյնպէս պիտի ստանան «կոկիկ» գումարներ:

### ԱՅԼ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Նշենք, որ զուգահեռաբար տեղի պիտի ունենան վազքի այլ մրցումներ, փոքրիկներու եւ պատանհներու, 40 տարեկանէն վեր եւ 70 տարեկանէն վեր արթիւթներու, ինչպէս նաեւ անդամալոյծներու համար:

# ԵՐԵՒԱՆ ԳՐԱԲԵՑ ՎԵՐՋՆԱԿԱՆ...

Շարունակում 7րդ էջին

մասնակցությունը բերաւ 215 մարզիկով (ամէնէն մեծաթիւ խումբը): Անոր մարզիկները իրենց շահած մետալները ստացան նախագահ Քոչարեանէն: Նախագահ Քոչարեանէն իր թագը ստացաւ նաեւ Փասատենայի աղջկանց պասքեթպոլի խումբին մարզիկներէն Լիոնա Ազարեան, որ ընտրուեցաւ Համահայկական 3րդ խաղերու գեղեցկուհին:

**Ճէր - փլէյի տիտղոսին տիրացաւ Սիտնիի տղոց պասքեթպոլի խումբը:**

Համահայկական 4րդ խաղերը տեղի կ'ունենան 2007ին:

Ստորեւ՝ վերջին օրուան մրցումներուն արդիւնքները եւ մետալներուն վերջնական դասաւորումը.

**■ՖՈՒԹՊՈԼ (Աւարտական)**

Վելի - Մոսկուա 4 - 1

**■ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ (Աւարտական)**

Երեւան - Վանաձոր 5 - 2

**■ՊԱՍՔԵԹՊՈԼ (Աւարտական)**

(Աղջիկներ)

Երեւան - Կլենտէյլ 85 - 57

(Տղաք)

Կլենտէյլ - Երեւան 97 - 92

**■ՎՈԼԵՅՈՒԼ (Աւարտական)**

(Աղջիկներ)

Պոլիս - Սիսիան 3 - 1

(Տղաք)

Երեւան - Պոլիս 3 - 0

**■ՃԱՏՐԱԿ (Վերջնական դասաւորում)**

(Տղաք)

1.- Դաւիթ Պետրոսեան (Վանաձոր) 6,5 կէտ



2.- Վարդան Մովսիսեան (Սիսիան) 6,5 կէտ

3.- Տիգրան Պետրոսեան (Երեւան) 5,5 կէտ

(Աղջիկներ)

1.- Անի Դարբինեան (Երեւան) 6 կէտ

2.- Նունէ Դարբինեան (Երեւան) 5,5 կէտ

3.- Սաթենիկ Ալթունեան (Երեւան) 5 կէտ

**■ՓԻՆԿ ՓՈՆԿ (Անհատական մրցումներու աւարտական)**

(Տղաք)

1.- Դաւիթ Սարգսեան (Մոսկուա)

2.- Վիթալի Սարգսեան (Մոսկուա)

(Զոյգի մրցումներու աւարտական)

1.- Վիթալի Սարգսեան (Մոսկուա) - Էտիկ Սարգսեան (Սոչի)

2.- Դաւիթ Սարգսեան (Մոսկուա) - Արթուր Գրիգորեան (Մոսկուա)

(Խմբային դասաւորում)

1.- Մոսկուա

2.- Երեւան

3.- Ստեփանակերտ

(Աղջիկներ) - (Անհատական մրցումներու աւարտական)

1.- Կալինա Մկրտումեան (Մոսկուա)

2.- Քրիստինէ Նազարեան (Մոսկուա)

(Զոյգի մրցումներու աւարտական)

1.- Կալինա Մկրտումեան (Մոսկուա) - Քրիստինէ Նազարեան (Մոսկուա)

2.- Աննա Պողոսեան (Երեւան) - Լուիզա Նազարեան (Երեւան)

(Խմբային դասաւորում)

1.- Մոսկուա

2.- Երեւան

3.- Ստեփանակերտ

Մետալներու վերջնական դասաւորում.



	ՈՍԿԻ	ԱՐԾԱԹ	ՊՐՈՆԶ
1.- Երեւան	29	22	12
2.- Մոսկուա	10	6	5
3.- Վանաձոր	3	6	8
4.- Թեհրան	3	5	7
5.- Գիւմրի	2	2	2
6.- Թիֆլիս	2	2	2
7.- Պոլիս	1	-	-
8.- Կլենտէյլ	1	-	-
9.- Սոֆիա	1	-	-
10.- Վելի	1	-	-